Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2022 թ. Նոյեմբերի 28-ի թիվ 3 նիստի

(Գիտխորհրդի 20 անդամներից ներկա էին 17-ը, բ. գ. թ. դոցենտ Ա. Մենեմշյանը, բ. գ. թ., դոցենտ Շ. Դոյդոյանը և ուսանող անդամ Մ. Կուրեխյանը հարգելի պատճառով ներկա չէին):

Նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտոր Հովհ. Հովհաննիսյանը, պրոռեկտորներ Է. Ասրիյանը, Մ. Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյանը, Նորարարության և զարգացման կենտրոնի տնօրեն Ա. Բաբաջանյանը, Հանրային կապերի և մարքեթինգի վարչության պետ Ա. Գրիգորյանը, ԵՊՀ ռեկտորի օգնականներ Վ. Խալաթյանը, Ք. Միսակյանը:

Օրակարգում մեկ հարց էր. դեկանի տարեկան հաշվետվությունը: Բացելով նիստը, ֆակուլտետի դեկան, գիտխորհրդի նախագահ, բ. գ. թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը առաջարկեց ընտրել նախագահող: Առաջադրվեց ընտրել բ. գ. դ., պրոֆեսոր Դ. Պետրոսյանի թեկնածությունը:

Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն կողմ քվեարկեց Դ. Պետրոսյանի թեկնածությանը:

Շարունակելով նիստը՝ նախագահող Դ. Պետրոսյանը առաջարկեց դեկանին զեկուցման համար տրամադրել 15 րոպե: Այնուհետև խոսքը տրվեց դեկան Ն. Մարտիրոսյանին (ելույթը կցվում է):

Ելույթից հետո հնչեցին հարցեր զեկուցողին, այնուհետև տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Ելույթ ունեցան բ. գ. թ., դոցենտ Ն. Վարդանյանը, Ք. Ալազուլյանը, , բ. գ. թ., դոցենտ Զ. Սարգսյանը, բ. գ. թ., դոցենտ Մ. Կարապետյանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Ավետիսյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Աբրահամյանը, ՀՀ հանրային հ/ը աշխատակից Ա. Օհանյանը:

Նախագահող Դ. Պետրոսյանը առաջարկեց գնահատել դեկանի աշխատանքը: Խորհուրդը միաձայն դրական գնահատեց Ն. Մարտիրոսյանի գործունեությունը:

Այնուհետև ելույթ ունեցավ ռեկտոր Հովի. Հովհաննիսյանը: Նա պատասխանեց նաև ներկաների հարցերին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Դ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ.Ջ. ՍԱՐԳՍՅԱՆ